

ընդհանուր դրույթներ և պայմաններ

1. Առարկա

- 1.1. Սույն Ընդհանուր Դրույթները և Պայմանները (Պայմաններ) սահմանում են «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի (Օրանժ) կողմից բաժանորդին (Բաժանորդ կամ Դուք կամ Ձեր/Ձեզ) հանրային շարժական կապի ծառայությունների (Ծառայություններ) մատուցման հիմնական դրույթներն ու պայմանները:
- 1.2. Ձեր և Օրանժի միջև կնքված ամբողջ բաժանորդային պայմանագիրը (Բաժանորդային Պայմանագիր), որպես կանոն, բաղկացած է (1) Դիմումից և դրա հավելվածներից (Դիմում), (2) Հատուկ Դրույթներից և Պայմաններից (Հատուկ Պայմաններ), եթե կիրառելի է (3) սույն Պայմաններից, (4) Քնացուցակից ու Սակագնային Պլանից և (5) Առաջարկների Նկարագրից ու Օգտագործողի Ուղեցույցից: Փաստաթղթերի միջև տարաձայնությունների առկայության դեպքում համապատասխան փաստաթղթի դրույթները կիրառվում են հետևյալ գերակայությամբ՝ (1)-ից (5):

2. Բաժանորդային Պայմանագիր

- 2.1. Բաժանորդային Պայմանագիրը հրապարակային օֆերտա (առաջարկ) է և Ձեր կողմից այն ընդունելու (ակցեպտավորելու) պահից հանդիսանում է Ձեր և Օրանժի միջև կնքված պարտադիր ուժ ունեցող միանալու պայմանագիր: Օրանժ ներկայացված պատշաճ ձևով ստորագրված և/կամ հաստատված Դիմումը, ներառյալ դրա էլեկտրոնային տարբերակով ներկայացումը Օրանժի վեբ կայքի միջոցով և/կամ Բաժանորդային Պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունների կատարումը համարվում է Բաժանորդային Պայմանագրի ակցեպտավորում:
- 2.2. Քնացուցակը, Սակագնային Պլանը և Առաջարկների Նկարագիրը, որտեղ նշվում են Ծառայությունները, գները, Ծառայությունների մատուցման պայմանները և կանոնները սահմանվում են Օրանժի կողմից և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել: Դրանք ցանկացած ժամանակ անվճար հասանելի են Ձեզ Օրանժի վեբկայքից և/կամ Հաճախորդների Սպասարկման Կենտրոնից և/կամ Օրանժի վաճառակետերից և/կամ ԶԼՄ-ներից: Օգտագործողի Ուղեցույցը Ձեզ է տրամադրվում Բաժանորդային Պայմանագիրը կնքելու ժամանակ: Մինչև Ծառայություններից օգուտվելը Դուք պարտավոր եք պահանջել բոլոր փաստաթղթերը: Որոշ փաստաթղթեր, որոնք կարող են ձեռք բերվել Օրանժի վեբ կայքից, Ձեզ չեն տրամադրվում թղթային տարբերակով, եթե Դուք չեք

պահանջում:

3. Բաժանորդ

- 3.1. Բաժանորդը ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, որն ակցեպտավորել է հրապարակային օֆերտան և կնքել է Բաժանորդային Պայմանագիր: Ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ կարող է դիմել Օրանժ Ծառայություններին բաժանորդագրվելու համար լրացնելով և ստորագրելով Օրանժի կողմից հաստատված համապատասխան փաստաթղթերը և ներկայացնելով այլ տեղեկություն ու փաստաթղթեր, որոնք պահանջվում են Օրանժի կողմից, եթե այլ բան սահմանված չէ Օրանժի կողմից կոնկրետ Բաժանորդների և/կամ Ծառայությունների համար:

4. Ծառայություններ

- 4.1. Օրանժը մատուցում է Ձեզ հանրային շարժական կապի ծառայություններ, որոնք ներառում են շարժական կապի, լայնաշերտ և հարակից այլ ծառայություններ:
- 4.2. Օրանժը մատուցում է Ծառայությունները ՀՀ օրենսդրության, Օրանժի ներքին ակտերի և Օրանժին տրամադրված լիցենզիային համապատասխան:
- 4.3. Առաջարկը, Ծառայությունների ցանկը և Սակագնային Պլանը ընտրվում է Ձեր կողմից և սահմանվում է Դիմումում, սակայն կարող է նաև պայմանավորված լինել տվյալ Առաջարկի և Սակագնային Պլանի առանձնահատկություններով: Դուք իրավունք ունեք պահանջելու լրացուցիչ Ծառայությունների մատուցում կամ Առաջարկի, Սակագնային Պլանի կամ Ծառայությունների ցանկի փոփոխում ինչպես ստորագրելով և ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթեր, այնպես էլ այլ միջոցներով (SMS, գանգահարելով Հաճախորդների Սպասարկման կենտրոն և այլն), ինչպես ժամանակ առ ժամանակ սահմանվում և թույլատրվում է Օրանժի կողմից պայմանով, որ Դուք այդպիսի պահանջ ներկայացնելու պահին Օրանժի նկատմամբ չունեք չմարված պարտք, եթե այլ բան սահմանված չէ Օրանժի կողմից:
- 4.4. Դուք իրավունք ունեք ստանալու ամբողջական և ճշգրիտ տեղեկություն Օրանժի Առաջարկների, Սակագնային Պլանների, գների, Ծառայությունների, ցանցի ծածկույթի, գանձված գումարների, պարտքերի, հաշվեկշռի վերաբերյալ և Օրանժի կողմից տրամադրվող այլ տեղեկություն:
- 4.5. Անհրաժեշտության դեպքում Ծառայություններին հասանելիությունն ապահովվելու համար Օրանժը

- Ձեզ հատկացնում է բջջային հեռախոսահամար և տրամադրում է SIM Քարտ (Բաժանորդին տարբերակելու հնարավորություն սովոր հեռախոսահամար կողմ փոխոչփոխված քարտ): Տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով և այլ դեպքերում Օրանժն իրավունք ունի փոփոխել տրամադրված հեռախոսահամարը՝ այդ մասին նախօրոք ծանուցելով Ձեզ:
- 4.6. Սույնով Դուք ընդունում եք, որ Ծառայությունները կարող են մատուցվել Ձեզ, եթե Ձեր կողմից պայմանագրային և տեխնիկական բոլոր պահանջները կատարվել են: Սույնով Դուք համաձայն եք, որ Ծառայությունները մատուցվում են Ձեզ առկա տեխնիկական հնարավորություններին, Ժամկայթին, ներգրավված տեխնիկական սարքավորումների առանձնահատկություններին և հնարավորություններին և Օրանժի ու նրա ցանցի տեխնիկական սահմանափակումներին՝ համապատասխան և դրանց սահմաններում ու Ծառայություններից օգտվելու և/կամ դրանց հասանելիություն ունենալու հնարավորությունը կարող է նաև պայմանավորված լինել Ձեր Սարքի (հեռախոս, մոդեմ և Ծառայություններից օգտվելու համար օգտագործվող այլ սարքավորումներ) տեխնիկական առանձնահատկություններով և հնարավորություններով, ինչպես նաև այլ օպերատորի ցանցում առկա սահմանափակումներով (օրինակ՝ ռոմինգ):
- 4.7. Օրանժը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ապահովելու համար Ծառայությունների պատշաճ և, որպես կանոն, շարունակական մատուցումը. այնուամենայնիվ, Դուք համաձայն եք և ընդունում եք, որ Ծառայությունների որակը կախված է ոչ միայն Օրանժից, այլ նաև այնպիսի հանգամանքներից, որոնց նկատմամբ Օրանժը հսկողություն չունի: Ծառայությունների մատուցումը կարող է կասեցվել և/կամ սահմանափակվել տեղադրման, վերանորոգման, փոխարինման կամ պահպանման աշխատանքների իրականացման նպատակով: Օրանժը պարտավորվում է, գործադրելով իր լավագույն ջանքերը, ժամանակին տեղեկացնել Ձեզ նման աշխատանքների իրականացման, ինչպես նաև ցանցի խոչոր վթարների և անջատումների հավանական ժամանակացույցի մասին՝ համաձայն գործող օրենսդրության:
- 4.8. Այլ բան սահմանված չլինելու դեպքում համարվում է, որ Դուք համաձայն եք ստանալ գովազդային, առևտրային կամ նմանատիպ այլ հաղորդագրություններ՝ Օրանժի բջջային ցանցի միջոցով, եթե Դուք չեք հրաժարվում դրանք ստանալուց՝ Օրանժի կողմից և/կամ օրենքով սահմանված կարգով:

5. **Ծառայություններից օգտվելը**
- 5.1. Դուք պարտավոր եք Ծառայություններից օգտվել օրենքին, Բաժանորդային Պայմանագրին և Օրանժի կողմից սահմանված այլ կանոններին և չափանիշներին՝ համապատասխան՝ առանց խախտելու կամ վնասելու երրորդ անձանց իրավունքներն ու շահերը: Այլ օպերատորների ցանցում և/կամ տարածքում ծառայություններից օգտվելիս Դուք պարտավոր եք պահպանել այդ օպերատորների կողմից սահմանված կանոններն ու չափանիշները: Ձեր կողմից օգտագործվող Սարքը պետք է լինի սերտիֆիկացված, ցանցի, Ծառայությունների ու SIM Քարտի հետ համատեղելի և համապատասխանի օրենքի պահանջներին:
- 5.2. Դուք իրավասու չեք օգտագործել Ծառայությունները առևտրային բնույթի, ներառյալ՝ էլեկտրոնային հեռահաղորդակցության Ծառայություններ մատուցելու, գովազդային կամ զանգվածային այլ հաղորդագրություններ ուղարկելու, քվեարկություն, մրցույթներ, հետազոտություններ, աճուրդներ, վիճակախաղեր, արշավներ և այլն կազմակերպելու և/կամ անցկացնելու նպատակով՝ առանց Օրանժի նախնական գրավոր համաձայնության:
- 5.3. Իրավաբանական անձինք Օրանժի առջև պատասխանատվություն են կրում իրենց աշխատողների համար նաև այն դեպքում, երբ անձնական հաշիվ է ակտիվացվել կորպորատիվ հաշվի ներքո:
6. **SIM Քարտեր և Սարքեր**
- 6.1. Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ Սարքը ձեռք է բերվում Ձեր կողմից՝ Ձեր հաշվին և հայեցողությամբ և Դուք պատասխանատվություն եք կրում դրա տեղակայման համար, եթե ժամանակ առ ժամանակ այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից: Որոշ Ծառայությունների (օր.՝ Լայնաշերտ Ծառայություններ) դեպքում Օրանժը կարող է առաջարկել Սարքեր, որոնք կարող են ձեռք բերվել Օրանժից՝ իրենց ամբողջ արժեքով կամ պարտավորությամբ որոշակի ժամանակահատվածում մնալ Օրանժի Բաժանորդ՝ Բաժանորդային Պայմանագրով սահմանված կարգով:
- 6.2. Դուք պարտավոր եք Օրանժից ձեռք բերված Սարքն օգտագործել Օրանժի, արտադրողի կողմից և այլ կերպ Սարքին ներկայացվող պահանջներին և շահագործման կանոններին համապատասխան: Դուք իրավասու չեք այլ անձի զիջել, վաճառել, վարձակալության հանձնել կամ որևէ այլ կերպ փոխանցել Սարքը և պարտավոր եք փոխհատուցել կորած կամ վնասված Սարքի արժեքն Օրանժին, եթե Դուք չունեք ամբողջական և անսահմանափակ սեփականության իրավունք նման

- Սարքի նկատմամբ:
- 6.3. Դուք իրավասու չեք այլ անձի զիջել, վաճառել, վարձակալության հանձնել կամ այլ կերպ փոխանցել SIM Քարտը, ներառյալ Օրանժից ձեռք բերված Սարքի մեջ տեղադրված SIM Քարտը և/կամ դրան կից իրավունքներն ու պարտավորությունները: Օրանժը պարտավորվում է անվճար փոխարինել Օրանժից ձեռք բերված ցանկացած SIM Քարտ, որը ճանաչվել է խոտանված դիզայնի կամ արտադրական թերության պատճառով: Այլ հանգամանքների դեպքում, ներառյալ SIM Քարտի, ինչպես նաև Սարքի մեջ տեղադրված SIM Քարտի կորստի կամ գողության դեպքում, Օրանժը կարող է Ձեզնից հավելյալ վճար գանձել դրա փոխարինման համար:
- 6.4. Օրանժն իրավասու է Բաժանորդային Պայմանագրի լուծման պահից SIM Քարտը և դրան ամրակցված հեռախոսահամարը փոխանցել այլ անձի: Անհրաժեշտության դեպքում Օրանժն իրավասու է ցանկացած ժամանակ փոխարինել SIM Քարտը մեկ այլ քարտով:
- 6.5. Դուք պետք է վերադարձնեք SIM Քարտը Օրանժից այդպիսի պահանջ ստանալու դեպքում և այդ մասին ծանուցումը ստանալու պահից զերծ մնաք այն օգտագործելուց:
- 6.6. Օրանժն իրեն իրավունք է վերապահում սահմանափակելու յուրաքանչյուր Բաժանորդին տրամադրվող SIM Քարտերի և այլ Ծառայությունների քանակը, ինչպես ժամանակ առ ժամանակ կարող է սահմանվել Օրանժի կողմից և առանց փոխհատուցման ապակտիվացնելու բոլոր կամ որոշ SIM Քարտերը կամ Ծառայությունները սահմանված սահմանափակումները գերազանցելու դեպքում:
- 6.7. Օրանժը հանդիսանում է SIM Քարտի ներառյալ Սարքի մեջ տեղադրված SIM Քարտի միակ սեփականատերը, բացառությամբ դրա վրա գտնվող Ձեր սեփականությունը հանդիսացող տեղեկատվության: Օրանժից ձեռք բերված Սարքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կարգավորվում է Բաժանորդային Պայմանագրով, իսկ SIM Քարտի և Օրանժից ձեռք բերված Սարքի պատահական կորստի, վնասվածքի կամ գողության դիմաց փոխանցվում է Ձեզ՝ այն Ձեզ տրամադրելու պահից:
- 6.8. SIM Քարտը և Օրանժից ձեռք բերված Սարքը հեշտ վնասվող են և դրանց հետ պետք է վարվել խնամքով: Դուք պարտավոր եք SIM Քարտը և Օրանժից ձեռք բերված Սարքը պատշաճ պահպանել, զերծ մնալ դրա ոչ պատշաճ օգտագործումից և թույլ չտալ դրանց օգտագործումը ոչ լիազորված անձանց կողմից: Օրանժը չի կրում որևէ պատասխանատվություն

- Օրանժից ձեռք բերված Սարքի և/կամ SIM Քարտի միջոցով Ձեզ պատճառված վնասի համար, եթե դա արդյունք է Ձեր կողմից դրանց ոչ պատշաճ օգտագործման, ինչպես նաև Ձեր կամ այլ անձանց կողմից SIM Քարտին և/կամ Սարքին պատճառված վնասի համար:
- 6.9. SIM Քարտի և /կամ Սարքի կորստի կամ գողության դեպքում, Դուք պարտավորվում եք Օրանժին անհապաղ տեղեկացնել այդ մասին՝ ներկայացնելով համապատասխան գրավոր ծանուցում և Օրանժի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:
- 6.10. Դուք պատասխանատվություն եք կրում երրորդ անձանց կողմից Ծառայությունների ցանկացած օգտագործման համար, մասնավորապես SIM Քարտի և/ կամ Սարքի սխալ շահագործման և/կամ ոչ լիազորված օգտագործման համար: SIM Քարտը և/կամ Սարքը տիրապետողը կհամարվի SIM Քարտի և/կամ Սարքի լիազորված օգտագործողը մինչև Ձեր կողմից SIM Քարտի և/կամ Սարքի կորստի կամ գողության մասին Օրանժին պատշաճ տեղեկացնելը և Օրանժի կողմից Ձեր պահանջով Ծառայությունների կասեցումը: Օրանժի կողմից նման պահանջը բավարարվում է 24 ժամվա ընթացքում:
- 6.11. Դուք իրավասու չեք օգտագործել SIM Քարտը և/կամ Սարքն անհամատեղելի Սարքի կամ այնպիսի Սարքի հետ, որը նախատեսված չէ նման օգտագործման համար կամ օգտագործել այն որևէ այլ կերպ, որը կարող է վնաս հասցնել ցանցին կամ Օրանժի ցանկացած այլ սարքավորմանը կամ ազդել դրանց գործառնության վրա:
- 7. Գներ**
- 7.1. Օրանժի կողմից Ծառայությունների նկատմամբ կիրառվող գները Բաժանորդային Պայմանագրի ստորագրման պահին գործող գնացուցակում սահմանված գներն են, որոնք պայմանավորված են Ձեր կողմից ընտրված Առաջարկով, Սակագնային Պլանով և Ծառայություններով: Օրանժն իրավասու է փոփոխել գները, Սակագնային Պլանը և/կամ մշակել և/ կամ կիրառել նոր գներ և/կամ Սակագնային Պլաններ՝ Բաժանորդային Պայմանագրում սահմանված կարգով:
- 7.2. Օրանժն իրավասու է Ձեզանից գանձել վերաակտիվացման գումար, ներառյալ տույժեր, սահմանափակված կամ կասեցված Ծառայությունների վերականգնման և SIM Քարտի վերաակտիվացման համար:
- 7.3. Ծառայությունների և դրանց հետ կապված իրավունքների և SIM Քարտի օգտագործման արդյունքում առաջացած ծախսերը կրում եք Դուք:
- 7.4. Մատուցված Ծառայությունների համար գանձվող

- գումարները և Ծառայությունների օգտագործման ծավալները հաշվարկվում են Օրանժի բիլինգային համակարգի կամ այլ օպերատորների բիլինգային համակարգի տվյալներով (օր․ ռոմիլգ)։ Նման տեղեկությունն Օրանժի կողմից պահպանվում է ոչ ավել քան 120 ամիս։
- 7.5. Ձեր պահանջով Օրանժը կտրամադրի մանրամասն վերծանում (ոչ ավել քան համապատասխան պահանջը ստանալու պահին Նախորդող 6 ամիսների համար) մատուցված Ծառայությունների վերաբերյալ, որոնց համար Օրանժն իրավասու է վճարումներ գանձել՝ Օրանժի կողմից սահմանված կարգով։
- 7.6. Ձեզ հնարավորություն կընձեռնվի էլեկտրոնային կամ Օրանժի կողմից հասանելի այլ եղանակներով ստուգելու Ձեր հաշվեկշիռը և Ձեր կարգավիճակը։
- 7.7. Ձեր վարկային պատմության և նմանատիպ այլ հանգամանքների հետ կապված կամ ելնելով տեխնիկական անիրաժեշտությունից՝ Օրանժն իրավասու է իր բացառիկ հայեցողությամբ սահմանել գումարային սահմանաչափ և օգտագործման վերաբերյալ այլ սահմանափակումներ։

8. Վճարումներ

- 8.1. Կախված Առաջարկից՝ Օրանժն իրավունք ունի Ծառայությունների համար սահմանել կանխավճար, ամսական վճար, դեպոզիտ, հետվճարում, գումարային սահմանաչափ (Ձեր հաշվին առկա առավելագույն բացասական հաշվեկշիռը, որի սահմաններում Դուք կարող եք օգտվել Ծառայություններից) և/կամ բանկային երաշխիք կամ Բաժանորդային Պայմանագիրը և Ծառայությունների մատուցումը պայմանավորել վերոնշյալով՝ Բաժանորդային Պայմանագրում սահմանված կարգով։ Վճարումը մասամբ կամ ամբողջությամբ ուշացնելու կամ չվճարելու դեպքում, Օրանժն իրավունք ունի նվազեցնել պարտքի գումարը երաշխիքային և/կամ կանխավճարի գումարից։
- 8.2. Ըստ Առաջարկի Դուք կարող եք վճարումն իրականացնել կանխիկ դրամով, Վերալիցքավորման Քարտի, բանկային փոխանցման, տերմինալների, ինտերնետի, Առքա Քարտեր ընդունող ATM-ների և/կամ Օրանժի կողմից ընդունելի այլ միջոցներով։ Օրանժը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարների գանձման համար։
- 8.3. Կանխավճարային Ծառայությունների համար վճարում.
- 8.3.1. Դուք իրավունք կունենաք օգտագործել Ծառայությունները Ձեր հաշվեկշռի սահմաններում, և մատուցված Ծառայությունների դիմաց գանձումները ուղղակիորեն կնվազեցվեն Ձեր հաշվեկշռից։ Դուք

- պարտավոր եք Ծառայություններից օգտվելու համար ժամանակ առ ժամանակ վճարել կանխավճար, ինչպես սահմանված է Օրանժի կողմից։
- 8.4. Հիբրիդ, Հետվճարային և Լայնաչեղտ Ծառայությունների համար վճարում.
- 8.4.1. Յուրաքանչյուր ամսվա Ձեր հաշիվը պատրաստվում և փոխանցվում է Օրանժի սպասարկման սրահներ՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 7-ը։ Ձեր ընտրությամբ հաշիվը կարող է ուղարկվել Ձեզ էլեկտրոնային փոստով կամ փոստային առաքման ծառայության միջոցով։ Ֆիզիկական անձիք պարտավոր են վճարել փոստային առաքման համար։ Օրանժն իրավունք ունի վճար գանձել Ձեր հաշվի կրկնօրինակը տրամադրելու համար։ Օրանժի կողմից ներկայացված հաշիվը դիտարկվում է որպես մատուցված Ծառայությունների և դրանց ծավալի ապացույց։
- 8.4.2. Ցանկացած դեպքում Դուք պարտավոր եք անձամբ ճշտել Ձեր ամսական պարտքը և պատասխանատվություն եք կրում այն ժամանակին վճարելու համար։ Դուք պատասխանատվություն եք կրում վճարումները ժամանակին կատարելու համար՝ անկախ վճարման միջոցից, հաշիվը ստանալու կամ ներկայացված հաշվի վերաբերյալ որևէ առարկություն ունենալու փաստից։ Դուք չեք կարող վիճարկել կամ առարկություններ ներկայացնել Օրանժի կողմից Ձեզ ներկայացված հաշվի վերաբերյալ, եթե Դուք չեք ներկայացրել նման պահանջ Օրանժից հաշիվը ստանալուց հետո 53 (հիսուներեք) օրվա ընթացքում։
- 8.4.3. Դուք պարտավոր եք վճարումները կատարել Հիբրիդ և Հետվճարային Ծառայությունների համար (ամսավճար ու բացասական հաշվեկշռի գումար) մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը։ Ամսվա ընթացքում Դուք հնարավորություն ունեք Հիբրիդ Ծառայությունների բացասական հաշվեկշռի և լրացուցիչ սահմանաչափի համար վճարել նաև այլ վճարման միջոցներով (օրինակ՝ Վերալիցքավորման Քարտով)։ Հիբրիդ Ծառայություններին բաժանորդագրվելու ժամանակ որպես կանխավճար Դուք պարտավոր եք վճարել մեկ ամբողջ ամսվա ամսավճարը, որը ենթակա է համամասնորեն նվազեցման հաջորդ ամսվա համար վճարման ենթակա գումարներից։
- 8.4.4. Լայնաչեղտ Ծառայությունների համար Դուք պարտավոր եք վճարել մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը։ Ամսվա ընթացքում Դուք նաև հնարավորություն ունեք Օրանժի կողմից սահմանված վճարման միջոցներով ձեռք բերել ամսավճարին համարժեք լրացուցիչ սահմանաչափ (օրինակ՝ Վերալիցքավորման Քարտերով), եթե նման հնարավորություն չի ակտիվացվել լրելյալ, ինչպես սահմանված է Բաժանորդային Պայմանագրում։ Լայնաչեղտ Ծառայություններին բաժանորդագրվելու

- ժամանակ որպես կանխավճար Դուք պարտավոր եք վճարել մեկ ամբողջ ամսվա ամսավճարը, որը ենթակա չէ համամասնորեն նվազեցման հաջորդ ամսվա համար վճարման ենթակա գումարներից:
- 8.4.5. Վճարումը համարվում է կատարված Օրանժի դրամարկը կամ Օրանժի բանկային հաշվեհամարին մուտք լինելու պահից:
- 8.4.6. Վճարում կատարելիս Դուք պետք է հստակ և ամբողջությամբ նշեք այն համարը, որի համար կատարվում է վճարումը: Խնդրում ենք հաշվի առնել, որ ցանկացած անձ, որը վճարում է կատարում Ձեր հաշվին համարվելու է Ձեր կողմից պատշաճ լիազորված և Ձեր անունից գործող: Սույնով Դուք անվերապահորեն ստիպ եք Ձեր համաձայնությունը Օրանժին՝ ուղղումներ կատարելու սխալ վճարումներում, ներառյալ՝ սխալ վճարման փոխանցումը Ձեր հաշվից ճիշտ հասցեատիրոջը: Ձեր անունից սխալ հաշվեհամարին կատարված ցանկացած վճարում ենթակա է ուղղման Օրանժի կողմից առկա ողջամիտ հնարավորությունների շրջանակում և Օրանժը պատասխանատվություն չի կրում պատճառված վնասների համար:
- 8.4.7. Իրավաբանական անձ Բաժանորդները պարտավոր են վճարել ներկայացված հաշիվը՝ անկախ իրենց աշխատողներից նրանց տրամադրված համապատասխան համարների դիմաց վճարների հավաքագրման փաստից: Օրանժը որևէ պատասխանատվություն չի կրում այդպիսի հավաքագրման համար:
- 8.4.8. Բաժանորդի կողմից Ծառայությունների դիմաց վճարումն ուշացնելու դեպքում Օրանժն իրավասու է կիրառել տույժ 0.01%-ի չափով ուշացման յուրաքանչյուր օրվա համար՝ հաշվարկված ուշացման 43-րդ օրվանից:
- 8.4.9. Դուք սույնով համաձայն եք և հաստատում եք, որ Օրանժի հաշիվները պատշաճ չվճարելու դեպքում պարտավոր եք Օրանժի առաջին իսկ պահանջով փոխհատուցել Օրանժի բոլոր ծախսերը՝ կապված այդպիսի ուշ վճարումների հավաքագրման հետ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով նման ուշ վճարումների հավաքագրման համար կատարած իրավաբանական ծախսերով:
- 8.4.10. Դուք սույնով ընդունում և համաձայնում եք, որ Օրանժն իրավասու է առանց որևէ ծանուցման գրոյացնել Ձեր հաշվեկշիռը՝ Ձեր կողմից այն չօգտագործելու և հետագա ամիսներ տեղափոխելու դեպքում՝ Օրանժի կողմից սահմանված կարգով:
9. **Կասեցում, Սահմանափակում**
- 9.1. Ըստ Առաջարկի և Սակագնային Պլանի, Օրանժն իրավունք ունի սահմանափակել կամ կասեցնել Ձեզ մատուցվող Ծառայությունները՝ առանց այդ մասին

- նախնական ծանուցման, եթե այն պարտադիր չէ նմանատիպ սահմանափակման կամ կասեցման համար: Սահմանափակումը կամ կասեցումը կարող է կիրառվել, եթե Դուք օգտագործում եք չտերտիֆիկացված կամ Օրանժի ցանցի հետ անհամատեղելի կամ ցանցին, ցանցի պատշաճ աշխատանքին կամ ցանցից այլ Բաժանորդների օգտվելուն խոչընդոտող Սարք, Դուք խախտել եք Բաժանորդային Պայմանագիրը և/ կամ օրենքը, Դուք մատուցված Ծառայությունների դիմաց մասամբ կամ ամբողջական վճարում ժամանակին չեք կատարել, ներառյալ կիրառվող տույժերը, Ծառայություններին բաժանորդագրվելուց Դուք ոչ ճիշտ կամ ոչ ամբողջական տեղեկություն և/ կամ փաստաթղթեր եք ներկայացրել կամ այլ կերպ բաժանորդագրման պայմանները չեն բավարարվել, Դուք գերազանցել եք Ձեր գումարային սահմանաչափը և/կամ այլ դեպքերում, որոնք սահմանված են Բաժանորդային Պայմանագրում: Կասեցման կամ սահմանափակման ընթացքում կարող են կիրառվել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են որոշ Ծառայությունների մասնակի կամ ամբողջական սահմանափակումը (մուտքային և ելքային) Օրանժի կողմից սահմանված ժամանակահատվածում և կարգով:
- 9.2. Կասեցման կամ սահմանափակման դեպքում վերակախվածում կարող է կատարվել Օրանժի նկատմամբ ունեցած բոլոր պարտքերը, տույժերը, եթե կիրառելի են և սահմանված վճարումները հավաքագրելու հետ կապված Օրանժի կողմից կրած՝ բոլոր ծախսերը Ձեր կողմից վճարելու դեպքում: Օրանժը կարող է իր հայեցողությամբ թույլատրել նման վերակախվածումը՝ պարտքը մասնակի վճարելու դեպքում, պայմանով, որ բոլոր պարտքերը Ձեր կողմից ամբողջությամբ կմարվեն մեկ ամսվա ընթացքում:
- 9.3. Ծառայությունները կասեցնելու կամ սահմանափակելու դեպքում Օրանժը՝ տեխնիկական հնարավորության դեպքում, ապահովում է արտակարգ իրավիճակների ծառայություններ գանգահարելու Ձեր հնարավորությունը:
- 9.4. Եթե Դուք հանդիսանում եք մեկից ավելի հեռախոսահամարների օգտագործող և Դուք դրանցից որևէ մեկի համար վճարում չեք կատարում սահմանափակում կամ կասեցում կարող է կիրառվել բոլոր այդպիսի համարների նկատմամբ:
- 9.5. Կասեցման կամ սահմանափակման ժամանակահատվածում կարող է գանձվել ամսական վճար՝ Օրանժի կողմից սահմանված կարգով:
10. **Պատասխանատվություն**
- 10.1. Կողմերը պատասխանատվություն չեն կրում սույն Պայմաններով ստանձնած պարտավորություններին

- ամբողջությամբ և/կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե պատճառը անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորի) ազդեցությունն է: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի հրաժարվել Բաժանորդային Պայմանագրից, եթե ֆորս-մաժորային իրավիճակը շարունակվում է 3 ամսից ավել: Սույնով Դուք հաստատում և համաձայնում եք, որ Ձեր ֆինանսական դրությունը չի կարող դիտարկվել որպես ֆորս-մաժոր պատասխանատվության տեսակետից, և Դուք պարտավոր եք ամբողջությամբ վճարել Օրանժի կողմից մատուցված Ծառայությունների համար՝ անկախ Ձեր ֆինանսական դրությունից:
- 10.2. Դուք Ծառայություններից օգտվում եք Ձեր սեփական ռիսկով: Օրանժը չի կարող որոշել Ծառայությունների համապատասխանությունը Ձեր կարիքներին:
- 10.3. Օրանժը չի երաշխավորում, որ Ծառայությունների մատուցման ընթացքում ընդհատումներ, սխալներ կամ խափանումներ չեն լինի, հատկապես ֆորս-մաժորային (ջրհեղեղներ, պատերազմ, կառավարական մարմինների անկանխատեսելի որոշումներ, էլեկտրականության խափանումներ, համաճարակներ և այլն) և Օրանժի վերահսկողության ներքո չգտնվող այլ իրավիճակների ու իրադարձությունների դեպքում (օր.: Բաժանորդի Սարքի որակը և տեխնիկական հնարավորությունները, այլ օպերատորների, այդ թվում՝ օտարերկրյա օպերատորների ցանցի գործունեությունը, ռադիոալիքների տարածումը և խափանումների այլ աղբյուրների գոյությունը, հանգամանքներ, որոնք խոչընդոտներ են ստեղծում ռադիոսարքավորումների նորմալ գործունեության համար, տարածքի առանձնահատկությունները, պետության և/կամ կարգավորող մարմինների որոշումների և/կամ գործողությունների հիման վրա Ծառայությունների մատուցման ընդհատումները և այլն): Օրանժը պատասխանատվություն չի կրում Ծառայությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար, որոնք վերոնշյալ իրադարձությունների և պատահարների, ինչպես նաև տեխնիկական վերազինման, պահպանման պաշտասանքների, հեռարձակման սարքավորումների վերազինման և այլ նման իրադարձությունների և գործողությունների արդյունք/հետևանք են: Օրանժը պատասխանատվություն է կրում Ծառայությունների ընդհատման համար, եթե այդպիսի ընդհատումները տեղի են ունեցել Օրանժի մեղքով և Դուք տեղեկացված չեք եղել դրանց մասին:
- 10.4. Օրենքով թույլատրելի սահմաններում, Օրանժը և Բաժանորդը համաձայնում են միմյանց գերծ պահել միմյանց պատճառված անուղղակի վնասներից, այդ թվում՝ բաց թողնված օգուտից: Օրենքով թույլատրելի սահմաններում ցանկացած դեպքում Օրանժի պատասխանատվությունը յուրաքանչյուր Բաժանորդի մասով չի կարող գերազանցել տվյալ Բաժանորդից մատուցվող Ծառայությունների դիմաց գանձվող ամսական միջին գումարը:
- 10.5. Օրանժը որևէ պատասխանատվություն չի կրում իր կողմից որևէ պատճառով Ձեր հեռախոսահամարի փոփոխության համար՝ այդպիսի փոփոխությունն իրականացնելուց 30 (երեսուն) օր առաջ Ձեզ տեղեկացնելու դեպքում:
- 11. Լուծում**
- 11.1. Օրանժն իրավունք ունի միակողմանի հրաժարվել Բաժանորդային Պայմանագրից առանց Ձեզ այդ մասին նախապես տեղեկացնելու (i) Ձեր կողմից Օրանժի ներկայացրած հաշիվները՝ 3 (երեք) ամսից ավել չվճարելու դեպքում շիբիրի, Հետվճարային կամ Լայնաշերտ Ծառայությունների համար կամ Ձեր հաշվեկշիռն ավելի քան 6 (վեց) ամիս չվերալիցքավորելու դեպքում Կանխավճարային Ծառայությունների համար, եթե այլ բան սահմանված չէ Բաժանորդային Պայմանագրում, (ii) ոչ ակտիվ ժամանակահատվածի ավարտին, ինչպես սահմանված է համապատասխան Առաջարկի Նկարագրում և Օգտագործողի Ուղեցույցում, (iii) Բաժանորդային Պայմանագրի որևէ պայմանի խախտման դեպքում, (iv) Ծառայությունների անպատշաճ կամ անօրինական օգտագործման դեպքում և (v) օրենքով և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ դեպքերում:
- 11.2. Դուք իրավունք ունեք միակողմանի հրաժարվել Բաժանորդային Պայմանագրից՝ այդ մասին 7 օր առաջ գրավոր ծանուցելով Օրանժին:
- 11.3. Բաժանորդային Պայմանագրի լուծումը, անկախ դրա պատճառներից, չի ազատում Ձեզ լուծման պահին մինչև լուծումը Օրանժի հանդեպ Ձեր ունեցած պարտքը վճարելու պարտավորությունից, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, բոլոր կիրառելի տույժերով և ծախսերով:
- 11.4. Օրանժի կողմից հաշիվների դիմաց վճարումներ չհավաքագրելը չի կարող դիտարկվել որպես չմարված պարտքի վճարման վերաբերյալ Ձեզ պահանջ ներկայացնելու Օրանժի իր իրավունքից հրաժարում:
- 11.5. Բաժանորդային Պայմանագրի լուծման դեպքում Ձեր կողմից վճարված կանխավճարը, ամսական վճարը կամ դրական հաշվեկշիռը ենթակա չեն հետ վերադարձման, բացառությամբ, եթե այլ բան է սահմանված Բաժանորդային Պայմանագրում կամ այդպիսի լուծման պատճառ է հանդիսանում Բաժանորդային Պայմանագրի էական խախտումն Օրանժի կողմից:
- 12. Գաղտնիություն և անվտանգություն**
- 12.1. Օրանժը պարտավոր է գաղտնի պահել Ձեր

- կողմից օգտագործվող Ծառայությունների, դրանց վայրի, նպատակի, նպատակակետի, ծավալի և այլ տեխնիկական պայմանների վերաբերյալ ցանկացած տեղեկություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
- 12.2. Սույնով Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը Օրանժի կողմից Ձեր տվյալները տրամադրել երրորդ անձանց, որոնք լիազորված են հավաքագրելու վարկային պատմություն կամ իրականացնելու վարկունակության գնահատում կամ օգտագործելու այսպիսի տեղեկատվությունը մարքեթինգային նպատակներով և համաձայն եք, որ Օրանժը և/կամ իր գործընկերները, որպես մարքեթինգային գործունեության մի մաս գրավոր ձևով կամ հեռախոսով կամ SMS/MMS ծառայությունների միջոցով կապվեն Ձեզ հետ կամ տեղեկացնեն Ձեզ Օրանժի վերջին առաջարկների և ծառայությունների մասին, եթե Դուք չեք բացառել Ձեր վերաբերյալ տեղեկատվության այսպիսի օգտագործումը:
- 12.3. Սույնով Դուք ընդունում եք, որ Օրանժը պատասխանատվություն չի կրում սպամի, հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա արդյունքում այլ վնասների պատճառման համար:
- 12.4. Օրանժը ոչ մի վերահսկողություն չի իրականացնում Օրանժի ցանցով տեղափոխվող տեղեկատվության նկատմամբ: Օրանժի ցանցի միջոցով ստացված տեղեկատվության և բովանդակության ճշտության, օրինականության և որակի համար: Օրանժը պատասխանատու չէ երրորդ անձանց կողմից կամ նրանց մասնակցությամբ Օրանժի տեխնիկական հնարավորություններն օգտագործելով տրամադրվող որևէ ծառայության համար և չի տրամադրում որևէ երաշխիք այդ կապակցությամբ:
13. **Տարածայնությունների Կարգավորում**
- 13.1. Սույն Պայմանագրից կամ դրա կապակցությամբ ծագած ցանկացած տարածայնություն ենթակա է վերջնական կարգավորման Հայաստանի Հանրապետության դատարաններում, Ձեր և Օրանժի միջև այդպիսի տարածայնության ծագման օրվանից 30 օրվա ընթացքում համաձայնության չհասնելու դեպքում:
14. **Եզրափակիչ դրույթներ**
- 14.1. Բաժանորդային Պայմանագիրը գործում է անորոշ
- 14.2. Դուք պարտավոր եք Օրանժին պատշաճ կերպով տեղեկացնել վերջինիս կողմից Ձեր վերաբերյալ գրանցված տեղեկություններում տեղի ունեցած փոփոխությունների մասին՝ փոփոխությունները տեղի ունենալուց 90 օրվա ընթացքում՝ գրավոր կամ համապատասխան դիմում ուղարկելով Օրանժի վեբ կայքի միջոցով:
- 14.3. Ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կապված հատուկ դրույթները սահմանված են Բաժանորդային Պայմանագրում ներառված Դիմումներում և այլ փաստաթղթերում: Սույն Պայմանների որոշ դրույթներ կարող են կիրառելի լինել միայն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց մասով:
- 14.4. Օրանժն իրավունք ունի ներկայացնել հրապարակային օֆերտա (առաջարկ) Բաժանորդային Պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով կիրառելի գների, Սակագնային Պլանների, վճարումների և այլնի վերաբերյալ: Փոփոխությունների մասին տեղեկատվությունը հրապարակվում է այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առաջ վաճառքի կետերում, գրասենյակներում և պաշտոնական վեբ կայքում: Մինչև այդպիսի փոփոխություններն ուժի մեջ մտնելը Օրանժի կողմից այդպիսի փոփոխությունների հետ համաձայն չլինելու վերաբերյալ Ձեր ծանուցումը չստանալու դեպքում կամ, եթե Դուք շարունակում եք օգտվել Օրանժի Ծառայություններից, այդպիսի փոփոխությունները Ձեր կողմից համարվում են ընդունված և համաձայնեցված Ձեզ հետ: Ձեր կողմից սույն կետում սահմանված կարգով առարկություններ ներկայացնելու դեպքում, Դուք իրավունք ունեք միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրից՝ կատարված փոփոխությունների հետ համաձայն չլինելու հիմքով:
- 14.5. Դուք իրավունք չունեք Բաժանորդային Պայմանագրով ստանձնած Ձեր իրավունքները և պարտավորությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց Օրանժի նախնական համաձայնության:
- 14.6. Բաժանորդային Պայմանագրի որևէ դրույթ անվավեր կամ առջինիչ համարվելու դեպքում, մնացած դրույթները չեն փոփոխվում և մնում են ուժի մեջ:
- 14.7. Բաժանորդային Պայմանագիրը ստորագրվում է հայերեն լեզվով: Եթե բացի հայերեն լեզվից այն ստորագրված է նաև այլ լեզվով, ապա գերակայությունը տրվում է հայերեն տարբերակին: